136

1. Բարի հրեշտակ այս առավոտ,
Հայտնվելով անկողնու մոտ,
Ժպտուն, զվարթ մանկան ըսավ.
«Ել ու երգե՝ Քրիստոս հարյավ»:

2. Մանուկն լցվեց սուրբ հրճվանքով
Եվ նա երգեց, թեև թոթով,
Բայց մանկական անուշ լեզվով՝
Քրիստոս հարյավ: (2)

3. Ես կը լսեմ, ահա, այսօր
Մարդիկ, հրեշտակք, աշխարհ բոլոր
Կերգեն անուշ եղանակով՝
Այս առավոտ Քրիստոս հարյավ:

4. Մեծ հարությամբ հույս շնորհեց,
Աշխարհ կանչեց, մեզի սիրեց,
Խավար էինք, մեզ լույս հանեց,
Իր մեծ փառքին արժանացրեց:

5. Բոլոր աշխարհ պիտի պատմեմ
Ու Իրեն միշտ գովաբանեմ,
Հույս ունեմ՝ Հիսուսին տեսնեմ
Իր բնակարանը մտնեմ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025